

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

..... 2018 թվականի NՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգը մշակվել է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:

2. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատության(այսուհետ՝ հաստատություն) դասարանների կազմավորման հետ կապված հարաբերությունները:

3. Դասարանը միևնույն առարկայական ծրագրեր ուսումնասիրող սովորողներից կազմված ուսումնական խումբ է:

4. Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, դպրոցի տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերի պահանջները:

5. Հաստատության տարրական և միջին դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է, ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 30 է:

6. Հաստատությունում սույն կարգի 5-րդ կետով սահմանվածից ավելի սովորողներ ունենալու դեպքում ձևավորվում են միևնույն առարկայական ծրագրերն ուսումնասիրող մեկից ավելի դասարաններ:

7. Բնակավայրի միակ հաստատությունում կարող են ձևավորվել բազմահամակազմ դասարաններ (ուսումնական խմբեր), որոնց ձևավորման կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան:

8. Բազմահամակազմ դասարանները (ուսումնական խմբերը) կարող են լինել երկհամակազմ, եռահամակազմ, քառահամակազմ:

9. Երկհամակազմ խմբերում սովորողների թիվը չի կարող գերազանցել 15-ը, եռահամակազմ խմբերում՝ 12-ը, իսկ քառահամակազմում՝ 8-ը:

10. Հատուկ դպրոցի դասարաններում (ուսումնական խմբերում) սովորողների թիվը սահմանվում է.

1) լսողության, տեսողության, հենաշարժական համակարգի, խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններում՝ 15 սովորող,

2) միջին և ծանր մտավոր հետամնացություն և բազմակի խնդիրներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններում՝ 9 սովորող,

3) հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններում՝ 20 սովորող:

11. Դպրոցում մեկից ավելի դասարաններ ունենալու պարագայում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դասարաններում բաշխվում են համաչափ:

1) Դպրոցում յուրաքանչյուր դասարանից մեկական լինելու պարագայում, դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը չի սահմանափակվում:

12. Սույն կարգով սահմանված սովորողների առավելագույն թվից պակաս թվաքանակով դասարան (ուսումնական խումբ) կարող է կազմավորվել (խորացված ուսուցման կազմակերպման և այլ ուսումնական նպատակներով) հանրակրթական դպրոցի ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ սույն կարգի 4-րդ կետի պահանջների պահպանմամբ:

13. Մասնագիտացված կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասարանները ձևավորվում են հաստատության կանոնադրության համապատասխան:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Ներկայացված նախագծի նպատակն է՝ հստակեցնել հանրկրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասարանների ձևավորման գործընթացը, դասարաններում սահմանել սովորողների քանակը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասարանները ձևավորում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլաններում սահմանված դրույթներով: Անհրաժեշտություն կա հստակեցնել այդ գործընթացը՝ ապահովելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի ապահովում, «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:

2. Կարգավորման առարկան

Կարգավորման առարկան հանրկրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասարանների ձևավորման գործընթացը հստակեցնելն ու կարգավորելն է, ինչպես նաև՝ դասարաններում սովորողների քանակը սահմանելը:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կհստակեցվի և կկարգավորվի դասարանների ձևավորման գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման կապակցությամբ այլի թավական ակտերի ընդունման անհրաժեշտություն կա, մասնավորապես անհրաժեշտ է ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով հաստատել «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում բազմահամակազմ դասարանի/ուսումնական խմբի/ կազմավորման և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման կարգը»:

ՏԵՂԵԿԱՆՔ 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՐ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	<p align="center">ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p align="center">2017-08-23 ԼԱ/10597-17</p>	<p>1. Նախագծի 12-րդ կետը առաջարկում են լրամշակել՝ նախատեսելով պակաս խտությամբ դասարանների կազմավորման հնարավորություն, ելնելով ուսումնական սենքի ծավալահատակագծային հնարավորություններից, ապահովելով մեկ սովորողի համար սահմանված մակերեսի և ուսումնական սենքերի կահավորման ժամանակ կահույքի և նստարանների կամ սեղանների միջև անցումների համապատասխան չափերն ու պատերից հեռավորության պահանջները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնների և նորմերի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով հաստատված ՀՀ ՇՆ 31-03.01-2014 «Հանրա-կրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերի պահանջները:</p>	<p>1. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն (տես խմբագրված նախագծի հավելվածի 11-րդ կետը):</p>

<p>2.</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>2017-08-21 ԱԱ/ԱԲՊ1/8646-17</p>	<p>1. Առաջարկվում է նախագծում հիշատակել իրավական ակտի տեսակը: Նշվածը բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասից, համաձայն որի իրավական այլ լրիվ ակտի անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը և տեսակը:</p>	<p>1. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>3.</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>2017-08-23 1/07.2/11983-17</p>	<p>1. Պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի մշակումը ենթադրում է կրթության որակի բարելավում: Սակայն կարգի 6-րդ, 8-րդ կետերի դրույթները չեն կարող նպաստել կրթության որակի բարելավմանը: 6-րդ կետում նշված տարրական, միջին, ավագ դասարաններում աշակերտների բարձր թվաքանակը, 8-րդ կետում նշված նույն դասասենյակում 2 ուսուցչի և աշակերտների 2 խմբի առկայությունը չեն կարող ծառայել այդ նպատակին: Կրթության որակը բարելավելու և խորը գիտելիքներ ունեցող շրջանավարտներ ունենալու համար ՀՀ բնապահպանության նախարարությունն առաջարկում է. նվազեցնել աշակերտների թվաքանակը տարրական, միջին և ավագ դասարաններում, բացառելով նույն դասասենյակում 2 ուսուցչի և աշակերտների 2 խմբի միաժամանակյա առկայությունը:</p>	<p>1. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>4.</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p> <p>2017-08-23 01/7-50978հ</p>	<p>Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p>		
<p>5.</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p> <p>2017-08-24 01/15.1/5393-17</p>	<p>1. ՀՀ Արագածոտնի մարզպետարան -</p> <p>Առաջարկում ենք.</p> <p>✓ 12-րդ կետը լրացնել.</p> <p>12.1. Սահմանված խտությունից պակաս խտությամբ դասարանում (ուսումնական խմբում) դասավանդող ուսուցիչների համար սահմանել նոր դրույթաչափ:</p> <p>✓ 13-րդ կետը լրացնել.</p> <p>13.1. Բազմահամակազմ դասարանում</p>	<p>1. Չի ընդունվել</p>	<p>1. Առաջարկությունը չի կարգավորվում ներկայացվող որոշման նախագծով</p>

(ուսումնական խմբում) դասավանդող ուսուցիչների համար սահմանել նոր դրույքաչափ:
Առաջարկում ենք նաև սահմանամերձ և բարձր լեռնային դպրոցներում ձեռնպահ մնալ բազմահամակազմ դասարանների ստեղծումից, որովհետև բնագիտական, ինֆորմատիկա, ՀԵՊ առարկաների դասաժամերը կրճատվում են և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչների համար նպատակահարմար չէ շարունակել աշխատանքը կամ ուսուցչի թափուր տեղի մրցույթին մասնակցելը:

2. ՀՀ Արմավիրի մարզպետարան -

Առաջարկվում է կարգի 6-րդ կետում տարրական և միջին դպրոցում դասարանում սովորողների առավելագույն թիվը սահմանել 30, իսկ ավագ դպրոցում՝ 25՝ հաշվի առնելով ուսումնական ծրագրերի ծանրաբեռնվածությունը:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան -

1. Նախագծի 1-ին կետում <<ծրագիր>> բառը փոխարինել <<ծրագրեր>> բառով:

2. Նախագծի հավելվածի 1-ին կետում <<կարգավորվում են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիր>> բառերը փոխարինել <<սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր>> բառերով (պահպանել հանրակրթական ուսումնական հաստատության սահմանումը՝ համաձայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի):

3. Նախագծի հավելվածի 2-րդ կետը, որպես վերը նշված կարգի ընդունման հիմնավորում, առաջարկվում է գրել նախագծի նախաբանում որպես հղում, համաձայն <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի և 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների:

4. Նախագծի հավելվածի 4-րդ կետում **բազմահամակազմ դասարանի մասին նոր ձևակերպումը**, հակասում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված «**բազմահամակազմ**

2. Չի ընդունվել

3. Ընդունվել է

2. Առաջարկությունը ընդունելիս ֆինանսական միջոցների անհրաժեշտություն է առաջանալու

3. Կատարվել է համապատասխան փոփոխություն

դասարան՝ տարբեր դասարանների առարկայական ծրագրեր յուրացնող սովորողներից բաղկացած ուսումնական խումբ» ձևակերպմանը: Առաջարկվում է սահմանումը գրել ինչպես պահանջվում է <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքով:

5. Նախագծի հավելվածի 5-րդ կետում «մանկավարժական խորհրդի որոշմամբ և դպրոցի տնօրենի հրամանով» բառերը փոխարինել «մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա՝ տնօրենի հրամանով» բառերով:

6. Նախագծի հավելվածի 7-րդ կետում <<միջին դպրոցում և ավագ դասարաններում>> բառերը փոխարինել <<միջին և ավագ դպրոցում>> բառերով:

7. Նախագծի հավելվածի 12-րդ կետում <<կառավարման խորհրդի>> բառերը փոխարինել <<կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետև՝ խորհուրդ)>> բառերով:

8. Նախագծի հավելվածի 13-րդ կետում «սովորողների քիչ թվաքանակի դեպքում» բառերը փոխարինել «սովորողների՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված թվաքանակից պակաս լինելու դեպքում» բառերով:

4. ՀՀՇիրակի մարզպետարան –

1. Առաջարկում ենք <<ՀՀ հիմնական ծրագրերի իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի» նախագծի 2-րդ գլխի 7 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու» և «Օտար լեզու», միջին դպրոցում և ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» առարկաների պարամունքներին դասարանը բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

5. ՀՀ Տավուշի մարզպետարան-

Առաջարկում ենք, նախագծի վերնագրում <<հիմնական>> բառից հետո ավելացնել <<ընդհանուր>> բառը, իսկ <<Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացնող պետական ուսումնական

4. Չի ընդունվել

4. Որոշման նախագծի 7-րդ կետը հանվել է

5. Ընդունվել է

5. Կատարվել է համապատասխան փոփոխություն

		<p>հաստատության դասարանների կազմավորման կարգի>> 13-րդ կետը շարադրելի ետևյալ կերպ.</p> <p>Հանրակրթական դպրոցի սովորողների քիչ թվաքանակի դեպքում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ձևավորվում են բազմահամակազմ դասարաններ (ուսումնական խմբեր): Երկհամակազմ ուսումնական խմբում սովորողների թիվը չի կարող գերազանցել 15-ը, եռահամակազմ ուսումնական խմբում՝ 12-ը, իսկ քառահամակազմ խմբում՝ 8-ը:</p> <p>6. ՀՀ Արարատի մարզպետարան- Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p> <p>7. ՀՀ Կոտայքի մարզպետարան – Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p> <p>8. ՀՀ Լոռու մարզպետարան - Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p> <p>9. ՀՀ Սյունիքի մարզպետարան - Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p> <p>10. ՀՀ Վայոց ձորի մարզպետարան – Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p>		
<p>6.</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>2017-10-27 01/14/19209-17</p>	<p>1. Նախագծով հաստատվող հավելվածի կարգի 3-րդ կետով /այսուհետ՝ կարգ/ տրված է «դասարանի» հասկացությունը, մասնավորապես՝ «Դասարանը միևնույն առարկայական ծրագրեր ուսումնասիրող և նույն տարիքային խմբին պատկանող սովորողներից բաղկացած ուսումնական խումբ է»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի դրույթները և «դասարանի» հասկացության սահմանումը համապատասխանեցնել վերջինիս ձևակերպմանը, ինչպես նաև հաշվի առնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները:</p> <p>2. Կարգի 2-րդ կետով նախատեսված են կարգի մշակման հետ կապված դրույթներ, մասնավորապես՝ նշված է, թե ինչ իրավական ակտերի համաձայն է մշակվել վերջինս: Այս կապակցությամբ նշված</p>	<p>1. Չի ընդունվել:</p> <p>2. Ընդունվել է:</p>	<p>1.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում դասարանի հասկացությունը սահմանված չէ, սահմանված է բազմահամակազմ դասարանը, իսկ ինչ վերաբերվում է 17-րդ հոդվածին, ապա այստեղ տրված է կազմավորման ձևը և ոչ դասարանի սահմանումը:</p> <p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

		<p>կետն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով, որ հիմնավորման մեջ արդեն իսկ նախատեսված են կարգի ընդունման հիմքերին վերաբերող դրույթներ և կարգում վերջիններիս նախատեսելու անհրաժեշտությունը չկա:</p> <p>3. Կարգի 9-րդ կետով նախատեսվում է, որ հանրակրթական դպրոցում սովորողների՝ սահմանված թվաքանակից պակաս լինելու դեպքում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ձևավորվում են բազմահամակազմ դասարաններ (ուսումնական խմբեր), որոնց ձևավորման կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերոնշյալ դասարանների ձևավորման կարգը չի կարող հաստատվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ հաշվի առնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց պետական ուսումնական հաստատության դասարանի կազմավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Ելնելով վերոնշյալ պահանջից կարգի 9-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող կրթության պետական կառավարման լիազորված մարմինն դասարանների ձևավորման կարգ հաստատելու լիազորություն տրվել:</p> <p>4. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ ֆինանսների նախարարության հետ:</p>	<p>3. Չի ընդունվել:</p>	<p>3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև՝ 30-րդ հոդվածի 18-րդ կետերով սահմանված է, որ «Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն՝ կարող են կազմավորվել բազմահամակազմ դասարաններ»:</p>
7.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>2017-11-20 01/9-2/21160-17</p>	<p>1. Նախագիծ 1-ով սահմանված կարգով (այսուհետ՝ Կարգ) նախատեսվող դասարանների խտության որոշ ցուցանիշներ տարբերվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի հունիսի 20-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և</p>	<p>1. Ընդունվել է մասամբ:</p>	<p>4. Համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:</p> <p>1. «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստա-</p>

		<p>հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 711-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 22-րդ կետով սահմանված ցուցանիշներից: Մասնավորապես. Կարգով տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 18-35 (Հրամանով սահմանված՝ 25-35-ի դիմաց), իսկ ավագ դպրոցում՝ 15-25 սովորող (Հրամանով սահմանված՝ 20-30-ի դիմաց): Մինչդեռ, նշված փոփոխությունների գծով հիմնավորումները բացակայում են:</p> <p>Հարկ է նշել նաև, որ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ 2), որում ներմուծված է նոր բաղադրիչ՝ դասարանների թիվ, և Նախագիծ 1-ով դասարանների խտության ցուցանիշի նվազեցումը՝ Նախագիծ 1-ի և Նախագիծ 2-ի ընդունման պարագայում, առաջիկա տարիների համար, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտության:</p> <p>2. Կարգի շրջանակներում ներկայացված չէ, թե ինչպես պետք է կազմավորվեն թերհամալրված դասարանները:</p> <p>3. Առաջարկում ենք Կարգի 6-8-րդ կետերում նշված «6-րդ կետով» բառերը փոխարինել «5-րդ կետով» բառերով:</p>	<p>2. Չի ընդունվել:</p> <p>3. Ընդունվել է:</p>	<p>տույությունների 2017-2018 ուսումնական տարվա, ինչպես նաև՝ դրան նախորդող բոլոր ուսումնական տարիների համար հաստատված օրինակելի ուսումնական պլաններով, օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 711-Ն հրամանում ամրագրված ցուցանիշների համաձայն՝ հաստատության դասարանների միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող՝ տարրական և միջին դպրոցի դպրոցի դասարանների համար, 20-25 սովորող՝ ավագ դպրոցի դասարանների համար, ընդ որում, սովորողների թիվը տարրական և միջին դպրոցների դասարաններում չի կարող գերազանցել 35-ը, իսկ ավագ դպրոցում՝ 30-ը: Ներկայացված ցուցանիշները սահմանված են որպես միջին խտության ցուցանիշ, ոչ թե նվազագույն թիվ:</p> <p>2. Թերհամալրված դասարանների կազմավորման վերաբերյալ կընդունվի այլ իրավական ակտ:</p> <p>3. Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
8.	ՀՀ կառավարության աշխատակազմ 2018-05-02 02/14.1/6450-18	1. Նախագծի 10-րդ կետով հատուկ դպրոցի դասարանների (ուսումնական խմբերի) համար սահմանվում են սովորողների նվազեցված թվեր, սակայն անդրադարձ չկա ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսում-	1. Ընդունվել է:	1. Կատարվել է համապատասխան փոփոխություն:

		<p>նական հաստատությունների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներով համալրված դասարաններում համանման մոտեցում կիրառելու խնդրին:</p> <p>2. Նախագծի 11-րդ կետում նախատեսվում է սահմանված խտությունից պակաս խտությամբ դասարան (ուսումնական խումբ) կազմավորելու հնարավորություն, սակայն նախագծով որևէ խտություն չի սահմանվում, այլ ընդամենը կարգավորվում է սովորողների առավելագույն թիվը:</p>	<p>2. Ընդունվել է:</p>	<p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>9.</p>	<p>Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի հիմնադրամ 2018-06-29 02/14.1/13202-18</p>	<p>1. Նախագծով սահմանվում է հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) տարրական և միջին, ինչպես նաև ավագ դպրոցների յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը, որն անհրաժեշտ է կրթական համակարգի պահանջվող նվազագույն որակն ապահովելու համար, սակայն սահմանված չէ յուրաքանչյուր դասարանում սովորողների նվազագույն թիվը, որն անհրաժեշտ է կրթական համակարգի պահանջվող նվազագույն տնտեսական արդյունավետությունն ապահովելու համար:</p> <p>2. Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ զարգացած երկրներում դասարանների կազմավորման համար որպես հիմք են ընդունվում ոչ թե սովորողների առավելագույն և նվազագույն քանակները, այլ սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը: Այսպես՝ օրինակ 2015 թ.-ի տվյալներով այս ցուցանիշը տարրական և միջին, ինչպես նաև ավագ դպրոցների համար միջինացված կազմում է՝ ԱՄՆ՝ 15.4, Ճապոնիա՝ 14.2, Գերմանիա՝ 13.9, Ֆինլանդիա՝ 13, Էստոնիա՝ 12.7 և այլն (տե՛ս Հավելված 2): ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2016/17 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակը կազմել է 364.9 հազար, իսկ ուսուցիչների թվաքանակը՝ 38.3 հազար: Այսպիսով, ՀՀ-ում սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը միջինում կազմում է 9.53 (2015/16 ուսումնական տարում՝ 9.42):</p> <p>3. Կրթական համակարգի որակի և</p>	<p>1.2.3.2ի ընդունվել:</p>	<p>1.2.3. Օրինակները բերված են միջազգային փորձից և կիրառելի չեն մեր երկրում: Միևնույն ժամանակ, դրանք չեն կարող նպաստել սովորող/ուսուցիչ հարաբերակցության արդյունավետությանը, ինչպես նշվում է: Միևնույն ժամանակ, առաջարկը առաջացնում է լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն:</p>

տնտեսական արդյունավետության համատեղ ապահովման համար նպատակահարմար ենք գտնում Հայաստանի դպրոցներում դասարանների կազմավորման համար հիմք ընդունել սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը՝ նպատակ ունենալով այն հասցնել զարգացած երկրների ցուցանիշների միջին մակարդակին: Արդյունքում հնարավորություն կստեղծվի նաև բարձրացնել ուսուցիչների աշխատավարձերը:

4. «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվել է ՀՀ-ում Հաստատությունների դպրոցներում սովորողների թվաքանակի և ուսուցիչների դրույքների վերաբերյալ տվյալների վերլուծություն, որի արդյունքում իրականացվել է ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի դպրոցների բաժանում՝ ըստ տեսակների և սովորող/դրույք հարաբերակցության, ինչպես նաև ներկայացվել են ցուցադրական առաջարկություններ դպրոցների օպտիմալացման վերաբերյալ (տե՛ս Հավելված 1):

Վերլուծության նպատակն է եղել սահմանել սովորող/ուսուցիչ հարաբերակցության կողմնորոշիչ շեմ (մասնավորապես՝ 9.5) և գտնել այն դպրոցների քանակը, որտեղ վերոնշյալ հարաբերակցությունը ցածր է ընտրված կողմնորոշիչ շեմից: Հարկ ենք համարում իրականացնել վերոնշյալ դպրոցների ուսումնասիրություն և գտնել լուծումներ դրանց օպտիմալացման խնդրի շուրջ:

5. Սովորող/ուսուցիչ հարաբերակցության նվազագույն շեմեր սահմանելիս նպատակահարմար ենք համարում ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ ըստ ՀՀ մարզերի:

4.5.2ի ընդունվել:

4.5. Առաջարկները վերաբերում են դպրոցների օպտիմալացմանը, ինչն այս կարգի շրջանակներում քննարկելի չէ: